

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆ ԴԱՐՉԱԾՔՆԵՐՈՒՄ

Թվականները հատուկ լեզվական նշաններ են, որոնք որոշակի համատեքստում դադարում են զուտ քանակ արտահայտել և ձեռք են բերում խորհրդանշական գործառույթ:

Թվականները մեծ դեր են խաղում դարձվածքների կազմության մեջ: Տարբեր աղբյուրներից (հայերենի դարձվածքները հիմնականում Ա.Ս. Սուքիասյանի, Ա.Ա. Գալստյանի »Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան«-ից, անգլերենի դարձվածքները Ա.Վ. Կունինի "Англо-русский фразеологический словарь"-ից և Brewer's dictionary of phrase and fable-ից) վերցված դարձվածքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայերենում հիմնականում հանդիպում ենք թվականներով կազմված 471 դարձվածք, իսկ անգլերենում՝ 293 դարձվածք: Դարձվածքների կազմությանը մասնակցում են թե քանակական, թե դասական թվականները, թեև դրանք մույն դարձվածքային ակտիվությունը չունեն: Մեր նյութում հանդիպող քանակական թվականները ներկայացնենք ըստ նվազող հաճախականության:

Հայերեն – 438 միավոր	
Թվականը	Քանակը
մեկ	231
երկու	80
յոթ (օխտը)	30 (9)
հազար	39
թոռս	22
հարյուր	11
տասը	7
երեք	3
հինգ	2
ութ	2
տասներկու	1
միլիոն	1

Անգլերեն - 208 միավոր	
Թվականը	Քանակը
One	75
Two	52
Four	13
Three	11
Nine	12
Seven	8
Hundred	8
Ten	5
Five	4
Thirty	3
Six	2
Forty	2
Thirteen	1
Seventeen	1
Eighteen	1
Nineteen	1
Twenty	1
Thirty-nine	1
Sixty	1
Ninty-nine	1
Thousand	1
Ten thousand	1

Four hundred	1
Fifty	1
Million	1

Համեմատելով քանակական թվականներով կազմված ՂԱ-ները հայերենում և անգլերենում՝ նկատում ենք, որ ամենալայն տարածումն ունեն *մեկ (one)* թվականով կազմված ՂԱ-ները, որոնք կարող են արտահայտել շատ տարբեր խորհրդանշական իմաստներ: Օրինակ՝ չափի նվազագույն միավոր՝ *մի թիզ, մի մատ* կամ անգլերենում *not one jot or tittle*, նմանություն՝ *մի սանրի կտավ* կամ անգլերենում *all in one piece*, միասնականություն՝ *խոսքները մեկ անել, մի մարդու պես* կամ անգլերենում *one and all, be at one, all on one stick*: Հայերենում *մեկ* թվականը հանդիպում է 231 ՂԱ-ներում, իսկ անգլերենում՝ 75-ում:

Եվ հայերենում (80 ՂԱ), և անգլերենում (52 ՂԱ) *երկու* քանակական թվականով կազմվում են տարաբնույթ ՂԱ-ներ, որոնք թվում քիչ չեն համեմատական կառուցվածքի ՂԱ-ները: Օրինակ հայերենում՝ *ինչպես քրի երկու կաթիլ, երկու կես արած բողկ*, անգլերենում՝ *as like as two peas, as cross as two sticks*: Այս թվականով կազմվում են երկընտրանք արտահայտող ՂԱ-ներ, հայերենում՝ *երկու կրակի (սրի, քարի) արանքում լինել, երկու մտքի լինել, երկու կարծիք չի կարող լինել, երկու տիրոջ ծառայել, երկու աթոռի արանքում նստել, անգլերենում՝ be between two fires, swim between two waters, be in two minds* (Մի՞նչ *have two minds*), *no two ways about it, no men can serve two masters, fall between two stools* (Մա՛կ *be between two stools*), *a donkey between two bundless of hay*: Հանդիպում են նաև մեկ գործողությամբ մի քանի նպատակ հետապնդելու իմաստ արտահայտող ՂԱ-ներ. հայերենում՝ *մի ձեռքով երկու ձմերուկ բռնել, մի հարվածով երկու նապաստակ խփել*, անգլերենում՝ *kill two birds with one stone, an ass with two panniers, run after two hares* և դրան հակառակ կա հետևյալ ՂԱ-ն՝ *if you run after two hares, you will catch neither*. *Երկու* թվականով դարձվածքների մի մասն էլ արտահայտում են սակավություն, պակասություն կամ բովանդակության սեղմ արտահայտում: Օրինակ. հայերենում՝ *երկու գրոշի խելք չունենալ, բողասին հուլա տաս՝ երկու այք չի վեր ընկնի, երկու խոսք իրար կապել չի կարող, երկու էշի գարի բաժանել չգիտենալ, գրպանում երկու կոպեկ չլինել, երկու խոսք, երկու տող, երկու բերան, անգլերենում՝ be unable to put two words together, a word or two, two and a plack*: Գոյություն ունեն ՂԱ-ներ, որոնք արտահայտում են անհամաձայնության, անհաշտության իմաստ. հայերենում՝ *երկու գլուխ մի կաթսայում չի եփում, երկուսի մեջ սև կատու անցնել (կամ կատու է անցել), երկուսի ջուրը մի առվով չի գնում, անգլերենում՝ two dogs over one bone seldom agree, two of a trade never (կամ seldom) agree*: Բացի այդ, հայերենում կան *երկու*

քանակական թվականով կազմված ՂՄ-ներ, որոնք չունեն համարժեքը անգլերենում (օրինակ՝ *խորամանկ աղվեսը երկու ոտքով է թակարդն ընկնում, օձիքը երկու, շունը շնից՝ երկուսը մի տանից, երկու տեր ողորմյա՝ մեկ ալելուիա, երկու հոգով, աստված երկու երեսեկ մեկին չի տա*) և նմանապես անգլերենում գոյություն ունեն ՂՄ-ներ, որոնց համարժեքները հայերենում չկան (օրինակ՝ *two strings to one's bow, look two ways for Sunday, the devil on two sticks, never hang a man twice for one offence, when two ride on one horse, one must sit behind*):

Քանակական թվականներով ՂՄ-ների հաջորդ մեծ խմբաքանակը հայերենում կազմում են *յոթ (օխտը)* թվականով կազմված դարձվածքները՝ 30 (9) միավոր, իսկ անգլերենում այդպիսիք համեմատաբար քիչ են՝ 8 միավոր: Համեմատելով հայերեն և անգլերեն դարձվածքները՝ նկատում ենք, որ համարժեք ՂՄ-ները շատ քիչ են. հայերեն՝ *աշխարհի յոթ հրաշալիքները, յոթ պորտ, անգլերեն՝ the seven wonders of the world, cousin seven times removed (խնամու եզան գեղից)*: Այս թվականը հայերեն ՂՄ-ում հաճախ նշանակում է, առատություն, մեծ քանակություն՝ *յոթ գլխով, յոթ գութանի տեր, յոթ որդով սեղան նստել, յոթ շեն կոխ տալ, յոթն օր, յոթ գիշեր, սիրտը յոթ գագ բաց լինել, սիրտը յոթ թիզ յուղ կապել*: Թվարկված վերջին ՂՄ-ում *յոթ* թվականը կարող է փոխարինվել *օխտը* բարբառային բառով. օրինակ՝ *օխտն օր, օխտը գիշեր, օխտը պորտ, սիրտը օխտը գագ բաց լինել* և այլն: Առանձնակի իմաստ ունի *յոթը կնիքով կնքված գիրք* արտահայտությունը, որը գալիս է Աստվածաշնչից և նշանակում է «գաղտնի, սահմանափակ քանակությամբ մարդկանց հասանելի, անհասկանալի մի բան»: Սրան իմաստով մոտ է նաև *լեզուն յոթ կողպեքի տակ փակել* արտահայտությունը:

Ուսումնասիրված ՂՄ-ների շարքում ըստ նվազող հաճախականության հաջորդ խումբը հայերենում կազմում են *հազար* թվականով դարձվածքները (39), որը սակայն անգլերենում գրեթե չի հանդիպում (1): Առհասարակ հազար թիվը նշանակում է մեծ քանակություն, ծավալ: Օրինակ. հայերենում՝ *հազար ծեռք ունենալ, հազար բերան, հազար տաշտից հաց կերած, լուն ունքից ընկնի՝ հազար կտոր կլինի, խոսքը հազար փութ մեղր է կշռում, մկան բնին հազար ոսկի տալ, հազար սրբի դիմելու տեղ մեկ Աստծուն դիմել, հազար չափել՝ մեկ կտրել*: Անգլերենում՝ *it is a thousand pities* ՂՄ-ի հայերեն համարժեքն է *մեղքը հազար արտահայտությունը*:

Չորս քանակական թվականով կազմված ՂՄ-ները հայերենում կազմում են 22 միավոր, իսկ անգլերենում՝ 13, որոնց մի մասը նշանակում է ինչ-որ բանի նկատմամբ առավել ուշադիր լինել: Օրինակ. հայերեն՝ *չորս աչքով նայել, չորս ականջով լսել, աչք ու ականջները չորս անել*, անգլերեն՝ *four eyes see more than*

two: Այս ԴՄ-ների մի մասն էլ ունի տարածքային սահմանափակման կամ անսահմանփակման իմաստ: Օրինակ, հայերենում՝ *չորս պատ, չորս պատերի մեջ նստել (պարել), չորս դին առնել կամ աշխարհի չորս կողմ (կամ ծագ), չորս կողմը, չորս բոլորը (դին), իսկ անգլերենում՝ within four walls, within the four corners of smth կամ the four corners of the earth, from the four corners of the earth:*

Հայերենում մոտ 11 ԴՄ-ներում գործածվում է *հարյուր* քանակական թվականը, իսկ անգլերենում այդպիսիք ութն են: Դարձվածքներից մի մասում *հարյուր* թիվը նշանակում է ,մեծ քանակություն, օրինակ հայերենում՝ *հարյուր անգամ, հարյուր ասա, հարյուր մաղի հաց ուտել* և անգլերենում՝ *a fool may throw a stone into a well which a hundred wise men cannot pull out, not a hundred miles away, երբեմն էլ՝ լրիվություն, ամբողջականություն, ինչպես օրինակ՝ հարյուր տոկոսով, հարյուր տոկոսանոց, անգլերենում՝ a hundred per cent:*

Մի շարք ԴՄ-ներում *տասը* քանակական թվականը հաճախ արտահայտում է մեծ քանակության իմաստ և կարող է փոխարինվել *հարյուր* կամ *հազար* թվականով, օրինակ՝ *տասը չափել, մեկ կտրել և հազար չափել, մեկ կտրել: տասն անգամ ասել և հարյուր անգամ ասել:* Հայերենում այս թվականով կազմված են 7 միավոր, իսկ անգլերենում՝ 5 միավոր (օրինակ՝ *face it with a card of ten, ride Bayard of ten toes, two upon ten, the ten commandments, etc):*

Ինչպես պարզվեց հայերենում *երեք* քանակական թվականով կազմված ԴՄ-ները շատ ավելի քիչ են (3), քան անգլերենում (11): Դրանցից են՝ հայերենում հեքիաթներից եկած *երկնքից երեք խնձոր ընկավ, երեք ծառերի արանքում մոլորվել* արտահայտությունները, անգլերենում՝ *gentleman of the three outs, որտեղ երեք թվականը արտահայտում որևէ բանի պակաս, քչություն, իսկ two is a company, but three is none; when three know it, all know it* դարձվածքներում նույն թվականը արտահայտում է քանակի ավելցուկ:

Թե հայերենում (2) և թե անգլերենում (4) *հինգ* թվականը դարձվածքներում համեմատում են ձեռքի հինգ մատների հետ, որը կարող է նշանակել ,միասնություն, քաջատեղյակություն: Օրինակ՝ *հինգ մատի պես իմանալ (գիտենալ, ծանաչել), հինգ մատի պես պարզ լինել* կամ *bunch of fives, know how many beans make five:*

Անգլերենում հանդիպում են թվով տասներկու ԴՄ-ներ՝ կազմված *ինը* թվականով: Ինչպես օրինակ՝ *nine times out of ten; possession is nine points of the law* դարձվածքները, որոնցում այն արտահայտում է «մեծամասնություն» խորհրդանշական իմաստը, իսկ *touch it off to the nines; to the nines, be dressed up to*

the nines դարձվածքներում այս թվականը նշանակում է «տեղը տեղին, արտակարգ»:

Մնացած քանակական թվականները ՊՄ-ներում շատ հազվադեպ են հանդիպում: Այսպես, օրինակ հայերենում *ութ*, *տասներկու*, *միլիոն* թվականներով կազմված են *ութ գծել*, *ութ գրել*, *տարին տասներկու ամիս*, *միլիոնների հետ խաղալ* ՊՄ-ները: Անգլերենում ևս բացի նշվածներից հանդիպում են մի շարք քանակական թվականներով կազմված մեկական կամ երկուական ՊՄ-ներ, օրինակ՝ *go fifty-fifty* (հավասար կիսել), *like forty* (վճռականորեն, նպատակասլաց), *the Old Thirteen* (ԱՄՆ-ի հին պետական դրոշը), *to be at sixes and sevens* (շփոթմունքի մեջ լինել), *go nineteen to the dozen* (անդադար խոսել), *eighteen carat lie, feel like a million dollars* և այլն:

Ըստ նվազող հաճախականության ներկայացնենք մեկ զուգադրվող լեզուների դարձվածքներում հանդիպող դասական թվականները:

Հայերեն – 33 միավոր	
Թվականը	Մասնակ
առաջին	17
երկրորդ	5
յոթերորդ	4
երրորդ	3
հինգերորդ	2
ութերորդ	1
իններորդ	1

Անգլերեն – 85 միավոր	
Թվականը	Քանակը
First	50
Second	22
Third	3
Fifth	2
Seventh	2
tenth	2
Fortth	1
Sixth	1
Ninth	1
Eleventh	1

Դասական թվականներից ՊՄ-ներ կազմելու գործում ամենամեծ հաճախականությունն ունի *առաջին* (անգլերենում *first*) թվականը (հայերենում՝ 17 միավոր, անգլերենում՝ 50): Պատճառն այն է, որ ժողովուրդը դրանով պատկերավոր կերպով նշում է որևէ գործում ամենազախավոր անձին, գործը նախածեռնողին, առաջ մղողին: Օրինակ, *առաջին ջութակը նվագել* կամ անգլերենում *play first fiddle* նշանակում է «որևէ գործի մեջ ղեկավար դեր խաղալ, լինել ամենազդեցիկ անձը», *առաջին քայլ* կամ անգլերենում *the first step* նշանակում է «որևէ գործի, որևէ բանի սկիզբ», *առաջին ձեռքից* կամ անգլերենում *at first hand* նշանակում է «ուղղակի սկզբնաղբյուրից, առանց միջնորդի»:

Հաջորդը *երկրորդ* դասական թվականով կազմված ՊՄ-ների շարքն է (հայերենում 5 միավոր, անգլերենում 22), որտեղ *երկրորդը* շնչառություն և երիտասարդություն գոյականների հետ նշանակում է «նոր ուժերի ծաղկում, նոր լիցքավորում» (*second wind, second birth*): Որոշ ՊՄ-ներում *երկրորդ* թվականը

կարող է նշանակել «ինչ-որ գործում երկրորդական դեր խաղալ», օրինակ՝ *երկրորդ ջութակը նվագել* կամ անգլերենում *play second fiddle, second banana* «օգնական»:

Ըստ նվագող հաճախականության հայերենում երրորդ տեղում է *յոթերորդ* թվականը՝ 4 միավոր: Ընդհանուր առմամբ այս թվականը շատ հին ծագում ունի և կապված է տարբեր ժողովուրդների դիցաբանական ու կրոնական առասպելների հետ: Այն հիմնականում գործածվում է երկինք գոյականի հետ և նշանակում է «երանություն, վայելքների աշխարհ»: Այս իմաստը կապված է երկնքի յոթերտանի կառուցվածքի կրոնական գաղափարի հետ՝ *յոթերորդ երկնքում լինել*: Անգլերենում նույնպես *յոթերորդ* թվականը գործածվում է երկինք գոյականի հետ (2 միավոր) և արտահայտում է նույն իմաստը՝ *be in the seventh heaven*:

Թեև հայերենում և անգլերենում *երրորդ* թվականով կազմված ՂՄ-ները քանակը նույնն է, սակայն դրանք արտահայտում են տարբեր իմաստներ: Հայերենում սերունդ գոյականի հետ այն նշանակում է «թոռներ» (*երրորդ սերունդ*), իսկ ձեռք բառի հետ՝ «մեկ այլ միջոց» (*երրորդ ձեռքից*): Կա նաև մեկ այլ ՂՄ՝ *սուրբ երրորդություն*, որը վերցված է Ստվածաշնչից և արտահայտում է աստծո երեք դրսևորումները՝ հայրը, որդին և սուրբ հոգին: Անգլերենում *երրորդ* թվականով կազմված հետևյալ դարձվածքներն են մեզ հանդիպել. *the third house* (*կոնգրեսի կուլիսներում*), *play the third fiddle* (*ամենաշան դեր ունենալ*), որոնցում *երրորդ* թվականը ձեռք է բերում «ամենշան, ոչ կարևոր» խորհրդանշական իմաստը, իսկ *the third degree* (*խոշտանգումներով հարցաքննություն*) դարձվածքում ընդհակառակը այն սաստկացնող իմաստ է արտահայտում:

Հայերենում *հինգերորդ* դասական թվականը ՂՄ-ներում անիվ գոյականի հետ նշանակում է «միանգամայն ավելորդ, ոչ պիտանի մարդ կամ իր»: Օրինակ. *կառքի հինգերորդ անիվ, սայլի հինգերորդ անիվ*, իսկ անգլերենում՝ *fifth wheel*:

Որևէ բանի ահավոր վտանգի կամ ամենաբարձր վերելքի խորհրդանիշը հայերենում արտահայտվում է *իններորդ ալիք* ՂՄ-ով, իսկ անգլերենում գործածվում է *տասներորդ* դասական թվականը՝ *tenth wave*:

Սեր նյութում հանդիպում է նաև մեկական դարձվածք հետևյալ դասական թվականներով՝ *ութերորդ* հայերենում (*ութերորդ հրաշալիք*, արտակարգ հրաշալիք, որ կարող է դասվել աշխարհի յոթ հրաշալիքների շարքին), *չորրորդ, վեցերորդ, իններորդ և տասնմեկերորդ* անգլերենում՝ *the forth estate*, *չորրորդ իշխանություն*, մամուլէ; *sixth sense*, վեցերորդ զգայարան, ինտուիցիան; *the ninth*

part of a man. դերձակե; at the eleventh hour, վերջին պահին, ամենավերջին վայրկյանին:

Վերլուծությունից պարզ դարձավ, որ հայերենում դարձվածքներ կազմելու գործընթացում առավել գործուն են *մեկ (231), երկու (80), յոթ (30)* քանակական և *առաջին (17), երկրորդ (5), յոթերորդ (4)* դասական թվականները: Անգլերենում առավել գործուն են *one (75), two (52), four (13)* քանակական թվականները և *first (50), second (22)* դասական թվականները: Հայերեն և անգլերեն դարձվածքներում թվականներն արտահայտում են տարբեր, յուրահատուկ, երբեմն համընկնող խորհրդանշական իմաստներ, որը խոսում է նյութական կյանքի և մարդու աշխարհընկալման հետ դրանց անմիջական կապի մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավետիսյան Կ., Իմաստուն խոսքերի աշխարհում, Երևան, «Հայաստան», 1973:
2. Գևորգյան Ա.Վ, Բառի խորհրդանշային կիրառությունը [Եզվուն // Սովետական մանկավարժ, N12, 1989. - էջ 12-17:
3. Ашукин Н.С., Ашукина М.Г., Крылатые слова, изд-е 4-е, дополненное, М., "Художественная Литература", 1987.
4. Рожанский А.Я., Фразеологизмы с числительными //Русский язык в школе, М., N1, 1957.
5. Kavka S., Zybert J., Glimpses on the History of Idiomaticity Issues, [ONLINE], Retrieved May 2008. Web site:<http://www.skase.sk/Volumes/JTL01/kavka.pdf>
6. MM Del Rosario, Number Symbolism. [ONLINE], Retrieved April 2011 Web site:<http://hubpages.com/hub/numbers>
7. Սուքիասյան Ա.Մ., Գալստյան Ս.Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1975.
8. Кунин А.В., Англо-русский фразеологический словарь /в двух томах/, М., "Советская энциклопедия", 1967.
9. Маккай А., Ботнер М.Т., Гейтс Дж.И., Словарь Американских Идиом /более 8000 слов и выражений/, Санкт-Петербург, "Лань", 1997.
10. Brewer's dictionary of phrase and fable, London, "Harper & Row", 1968; 17th edition, 2006.
11. Bruce-Mitford Miranda, The Illustrated Book of Signs & Symbols, New York: DK Publishing, 1996, Electronic Library Consortium of Armenia, Web site: <http://www.oxfordreference.com/>